

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴ-26/1 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Մեղալը բաղկացած է 2 մասից՝ ցինկապատ պողպատե հնգանկյուն կախիչից և դրան կապողակով ամրացած երկկողմ պատկերով սկավառակից: Մեղալի կախիչը ասեղային ամրակով է: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24, որը երեսպատված է 24 միլիմետր լայնություն ունեցող մետաքսե մուգ կապույտ ժապավենով, որի եզրերով երկու կողմից անցնում են կարմիր՝ 1.5 միլիմետր լայնությամբ զուլակներ: Մեղալն արտադրվում է պղնձի հատուկ համաձուլվածքից և պատվում է 999 հարգի ոսկով: Մեղալի տրամագիծը 38 միլիմետր է: Մեղալի հաստությունը՝ մոտավորապես 4 միլիմետր ($\pm 10\%$ շեղում): Մեղալի եզրագծին զուգահեռ՝ դիմերեսով, անցնում է 2 միլիմետր լայնությամբ շրջան, որի վերևի հատվածում կորածև առկա են հայատառ, ռելիեֆային, ուռուցիկ «ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԼԴՄԱՆ ՀԱՄԱՐ» բառերը: Մեղալի դիմերեսին՝ կենտրոնական մասում, առկա է 25.5 միլիմետր տրամագծով շրջան, որի կենտրոնում տեղակայված է 18.3 միլիմետր տրամագծով Կոմիտեի ռելիեֆային լոգոն՝ պատված սպիտակ Էմալով: Շրջանի եզրագծին զուգահեռ առկա է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» ուռուցիկ, ռելիեֆային գրառումը: Գրառման կենտրոնում տեղադրված են 4.2 միլիմետր երկարությամբ տերևներ, որոնք ձգվում են աջ և ձախ: Շրջանը արտաքինից՝ վերևի հատվածում, եզերված է կիսալուսնաձև Հայաստանի Հանրապետության դրոշմ խորհրդանշող եռաշերտ գոտիով՝ զարդարված եռագույն քարերով (կարմիր՝ 59 հատ- նանոբյուրեղ, կապույտ՝ 55 հատ-նանոբյուրեղ, ծիրանագույն՝ 52 հատ- ցերկոն): Մեղալի կենտրոնում տեղակայված է Ֆեմիդայի արձանը՝ ի նշան հավասարության, անաչառության, իրավակարգի և օրինականության ամրապնդման: Մեղալի դիմերեսը ներքևի հատվածում զարդարված է դափնու տերևներով,</p>

որոնց լայնությունը կազմում է 4.6 միլիմետր: Դափնու տերևները ձգվում են կենտրոնից դեպի աջ և ձախ: Մեղալի դարձերեսին՝ ներքևի հատվածում, դաջված է Մեղալի եռանիշ հերթական համարը: Վաճառողը Գնորդին պետք է ներկայացնի փորձաքննության եզրակացություն մատակարարվող մեղալների տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ: Մեղալի հետ հանձնվում է նաև իր տուփը: Տուփ՝ չափերը՝ 120x100մմ, բարձրությունը 30մմ, կազմված կազմարարական 2մմ հաստությամբ ստվարաթղթից, երեսպատված դիզայներական պլայկ թղթով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում կրծքանշանի չափերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ մեղալը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է Նիադիմովի մագնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N 35 ուժով): Կափարիչի վրա ՀՀ քննչական կոմիտեի լոգոտիպի 50 մմ տրամաչափով UV տպագրություն: Տուփի գույնը մուգ կապույտ: Ապրանքի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԲԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴ-26/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	